ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/89» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 17.11.2026թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Լուսինե Արսենյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վերգինե Թառոյան
	Գոհարիկ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Շելեգոն

Ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**
   Մինչև հրավերում փոփախությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից չեն ներկայացվել

   Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխան են,** բացառությամբ «ԼԵՅԱ ՄԵԴ» ՍՊԸ-ի և «ՆԻՄԵՔՍ» ՍՊԸ-ի կցած հայտերի, մասնավորապես՝
   - «ԼԵՅԱ ՄԵԴ» ՍՊԸ-ի կցված հայտում բացակայում է հրավերով պահանջվող ավտարիզացիոն նամակը:
   - «ՆԻՄԵՔՍ» ՍՊԸ-ի կցված հայտում նշված չէ ստորագրած անձի պաշտոնը:

Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և կցել շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի նոյեմբերի 19-ին ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝	Լուսինե Արսենյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վերգինե Թառոյան
	Գոհարիկ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Շելեգոն